էին գալիս, ողջունում էին եւ լուռ նստում: Այդ ինքնակոչ հիւրերի համար նոր կերակուր էին բերում: Մուշից բերել տոած գինին առատ էր. խմում էին մեծ գաւաթներով եւ այնքան ախորժակով, որ ինձ յիշեցնում էին Հոմերոսի հերոսներին: Խօսում էին մեծերը եւ հասակաւորները միայն եւ աւելի միջոց էին տալիս, որ մենք խօսենք: Ասլանը հարցրեց.

— Ինչպէ՞ս են ձեր յարաբերութիւնները քրդերի հետ:

— Վատ չեն, — պատասխանեց ռեսը: — Առաջ միմեանց հետ այնպէս էինք, ինչպէս շուն ու կատու, բայց հիմա այնպէս ենք, ինչպէս լաւ դրացիներ: Մենք նրանց տունն ենք գնում, նրանք մեր տունն են գալիս, եւ մեր անասունները միասին միեւնոյն արօտատեղիներում են արածում: Երբեմն մեր գիւղացիներից ոմանք «զոմա» չեն գնում, իրանց ոչխարները յանձնում են նրանց, տանում են լեռների վրայ, ամբողջ ամառը պահում են եւ աշնան վերջերում բերում, ողջ ու առողջ յանձնում իրանց տիրոջը: Ոչինչ վարձ էլ չեն ընդունում, երբ տէրը առաջարկում է նրանց, ասում են՝ «հարեւանութիւն է, այսօր ես եմ քեզ պէտք գալիս, էգուց դու ինձ պէտք կգասէ: Եւ այդպէս էլ լինում է, երբեմն ձմեռը երկարում է նրանց անասունների ճարակը սպառւում է, մեր գիւղացիք բերում են նրանց անասունները, իրանց փարախներում պահում են, մինչեւ գարնան խոտը բուսնում է, յետոյ գալիս են, տանում են:

— Միշտ այդպէ՞ս են եղել ձեզ հետ քրդերը:

— Առաջ այդպէս չեն եղել: Առաջ մեր գիւղացին իր ունեցածի տէրը չէր: Ինչ լաւ բան որ տեսնում էին նրա մօտ կամ յայտնի կերպով յափշտակում էին, կամ գաղտնի կերպով գողանում էին: Ոչ միայն մեր անասունների, այլեւ մեր կանանց ու աղջիկների տէրը չէինք...

— Ինչպէ՞ս եղաւ, որ այժմ այդպէս բարի դարձան քրդերը:

— Մենք ստիպեցինք նրանց բարի լինելու, — ժպտալով պատասխանեց քահանան: — Առաջ ինչ որ անում էին, ձայն չէինք հանում, համբերում էինք, կարծում էինք, որ այդպէս լաւ է, գուցէ մեր խոնարհութեամբ նրանց չարութիւնը խափանենք: Բայց որքան համբերեցինք, նրանք աւելի կատաղէան: Սկսեցինք մենք էլ նոյն կերպով վարոել նրանց հետ: Նրանք մեր մի ոչխարն էին գողանում, մենք փոխարէնը տասն էինք գողանում: Նրանք մեր մարդու մի մատն էին կտրում, մենք մեր ձեռքն ընկած քրդի գլուխն էինք կտրում: Եւ ինչո՞ւ պէտք է մեր մեղքը ծածկեմ. շատ անգամ բոլորովին անմեղ քրդեր, երբ մեր լեռների մէջ պատահում էին, բռնում էինք, եւ հանգստացնելով, թաղում էինք քարերի տակ: Այդ որ տեսան, քրդերը աւելի կատաղեցան: Մի քանի անգամ խումբերով յարձակոեցան մեր գիւղի վրայ, բայց երբ փորձեցին,